սանդրապոլի վրայով անցնելու Ջուլֆա և այդ մասին ոչինչ չհաղորդեցին ինձ։ Ես բողոքեցի նման ընթացքի դէմ»։*)

Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթուղագիծը իրենց տրամադրելու պահանջը թիւրքերը հետապնդում էին շատ խիստ կերպով։ Եւ մինչ երկու պատուիրակութիւնների միջև սկսւեց օրեր տևող դրաւոր վէճ Բրեստ-Լիտովսկի շուրջ, երկու կողմից կազմուած մի յատուկ զինուորական յանձնախումբ քննում էր այս պահանջը։ Թիւրքերը պնդում էին, որ երկաթուղին տրւի իրենց, որպէսզի օր առաջ զօրք հասցնեն անդլիացիների դէմ։ Անդրկովկասի ներկայացուցիչները՝ զօր. Օղիշելիձէն և զօր. Ղորղանեանը հակառակում էին՝ առարկելով, որ այդ հարցը կարող է վճռւել միայն ընդհանուր դաշնադրի ստորագրութեամբ։

Ցուսահատուած խաղաղ միջոցով երկաթուղին ստանալու մտքից՝ մայիս 14 լոյս 15-ի գիշերը թիւրքերը ներկայացրին վերջնագիր, որ մայիս 15-ի առաւօտեան ժամը 7-ին Ալեքսանդրապոլը յանձնւի իրենց, և հայկական զօրքերը քաշւեն 25 կիլոմետր դէպի արեւելք։ Եւ առանց պատասխան ստանալու, մայիս 15-ի առաւօտեան ժամը 2-ին, Ալեքսանդրապոլի դէմ գործող թիւրք զօրքերի հրամանատարը վերջնագրի թիւրքերէն պատճէնը ուղարկեց Ալեքսանդրապոլի հրամանատարին՝ պահանջելով մինչև ժամը 6 դատարկել քաղաքը։ Հաղիւ մինչեւ ժամը 6 ու կէսը կարելի եղաւ թարգմանել թուղթը, այն ինչ ժամը 6-ից սկսւեց քաղաքի ռմբակոծումն ու թիւրքերի յարձակումը։ Հայկական բանակը յանկարծակիի եկաւ և շտապով նահանջեց։ Ալեքսանդրապոլն անցաւ թիւրքերի ձեռքը։

Հայկական զօրքերի նահանջը, զօր. Նազարբէկեանի կարգադրութեամբ, կատարւեց երկու ուղղութեամբ. հայկական առաջին դիվիզիան և 2րդ դիվիզիայի 7րդ և 8րդ գնդերը անցան դէպի Գէոք-Եողուշ-Բեքեանդ-Աւդիրէկ-Փամբ դիւղադիծը։ Ձիաւոր բրիգադը, իբրև յետապահ, մնաց Զրախլու դիւղում։ Առաջին և երկրորդ բրիգադները 2րդ ձիաւոր գնդի հետ շարժւեցին Սարդարապատի ուղղութեամբ՝ զօրացնելու համար Երևանի զօրամասը։ Անդրանիկին, որ մայիս 1-ից ի վեր դրաւում էր Գիւլլի Բուլաղը, հրամայւեց պահպանել Ախալքալաք և Վորոնցովկա տանող ճանապարհները, սակայն, նա չմնաց այնտեղ և քաշւեց-գնաց Ջալալ-Օղլի։

Այսպիսով, տարածւած լայն ճակատով, հայ զօրքերը պաշտպանում էին հայկական շրջանները։ Թիւրքերը քայլ առ քայլ յառաջանում էին և մայիս 22-ին դրաւեցին Համամլու կայարանը, որով բացւում էր Երեւանի ճանապարհը։ Երեւանից շտապով նրանց դէմ Բաշ-Աբարան ուղարկւեց մի զօրամաս Դրօի գլխաւորութեամբ։ Բացի այդ, միջոցներ ձեռք առնւեցին ամրացնելու Ղարաքիլիսայի ճակատը։ Զօր. Նազարբէկեանը մի կոչ ուղղեց զօրքին, որով դիմում էր նրանց հայրենասիրական զգացմունքներին և հրաւիրում կատարել իրենց պարտականութիւնները ժողովրդի հանդէպ։ Կարելի եղաւ կանգնեցնել ու կարգի բերել նահանջող զօրամասերը։ Ցուսալքումը տեղի տւեց ոգեւորութեան։

---

*) I. Lepsius, Deutschland Und Armenia, Berlin, 1919.